ԵՐԵՎԱՆԻ ԻՐԱՎԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՔՈԼԵՋԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

11.10.2022 17:36

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը 2022թ. հոկտեմբերի 11-ին հյուրընկալել էր.....:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը ողջունել է ուսանողներին և ներկայացրել փաստաբանի դերն արդարադատության համակարգում, փաստաբանի գործառույթները և գործունեության առանձնահատկությունները, փաստաբան դառնալու ընթացակարգը և պայմանները, փաստաբանական դպրոցի և փաստաբանների պալատի գործառույթներն ու կառուցվածքը:

Ուսանողների հետ հանդիպել և զրուցել է նաև Փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավար Լուսինե Սարգսյանը՝ անմիջականորեն ծանոթացնելով Փաստաբանների պալատի աշխատանքային պայմաններին:

Հանդիպման ավարտին ուսանողները շրջել են Փաստաբանների պալատի վարչական շենքում, Փաստաբանական դպրոցում և Հանրային պաշտպանի գրասենյակում:

BACK $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })